ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 1 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Կարապետ Հաջիյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Կարապետ Հաջիյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի մարտի 23-ին)՝ խնդրելով. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ եւ 231-րդ հոդվածի 4-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավադրույթները սահմանափակում են դատարանի մատչելիության իրավունքը եւ դրանով հակասում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներին:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 10-ի ՍԴԱՈ-13 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Հովհաննես Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 231-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսելու օր է նշանակվել 2015 թվականի հունիսի 16-ը: Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով, գտնում ենք, որ հիշյալ գործին կարող է միավորվել քաղաքացի Կարապետ Հաջիյանի՝ քննության առարկա դիմումով գործը:

Քննության առարկա անհատական դիմումով միջնորդություն է ներկայացվել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Կարապետ Հաջիյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 231-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Առաջարկել քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի մարտի 10-ի ՍԴԱՈ-13 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Հովհաննես Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 231-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

4. Բավարարել քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

1 ապրիլի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-12